

**«ԷՆՖԻԱՃԵԱՆՑ» ՏՊԱՐԱՆԻ ԴԵՐԸ 1856-1870 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՖԼԻՍԻ
ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ**

ՍԻՐԵԿԱՆՅԱՆ ՏԻՐՈՒՀԻ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան*

Էլ. հասցե՝ tiruhi.sirekanyan@list.ru

DOI: 10.24234/scientific.v2i45.98

ԱՄՓՈՓՈՒՄ

1512 թվականին Իտալիայի Վենետիկ քաղաքում տպագրվել են առաջին հայալեզու գրքերը: Բայց միայն XIX դարի առաջին քառորդում գրատպությունը մուտք գործեց Կովկաս՝ Վիրահայոց իրականություն: 1819 թվականին Վիրքի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու՝ Թիֆլիսում հիմնադրած հայկական տպարանը ոչ միայն առաջինն էր հայկական, այլև վրացական իրականության մեջ: Այդտեղ 1823 թվականին իրականացված առաջին հայերեն գրքի տպագրությամբ կովկասահայության շրջանում սկսվել է լուսավորություն տարածելու քաղաքակիրթ գործընթացը:

Հոդվածի նպատակն է բացահայտել թիֆլիսահայ գրատպության կարևորագույն օջախներից մեկի՝ «Էնֆիաճեանց» տպարանի 1856-1870 թթ. բազմաեւեջ գործունեության դրվագները: Տպարանը բացել են Ավետիք և Համբարձում Էնֆիաճեանց եղբայրները 1856 թվականին, ապա այն անցել է Համբարձում Էնֆիաճեանցին (1857-1859), այնուհետև Համբարձում Էնֆիաճեանցը համագործակցել է Գաբրիել Մելքումեանցի հետ (1859-1863): 1863 թ. Համբարձումը դարձյալ մենակ է ղեկավարել տպարանը: 1864-1870 թվականներին նրա հետ համագործակցել են Գաբրիել Սունդուկեանցն ու Դավիթ Ռոստինեանցը:

Բանալի բառեր՝ «Էնֆիաճեանց» տպարան, Ավետիք և Համբարձում Էնֆիաճեանցներ, Գաբրիել Սունդուկեանց, բժիշկ Դավիթ Ռոստինեանց, իրատարակիչ Մարկիանոս Ռոստինեանց, հայերեն գրատպություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անգնահատելի է «Էնֆիաճեանց» տպարանի դերը 1856-1870 թթ. Թիֆլիսի հայ գրատպության զարգացումներում: Տպարանը ստեղծած երկու երիտասարդ կարնեցիները տպագրական գործի քառորդ դարում հայկական գրատպությանն այնպիսի նոր լիցք հաղորդեցին, որը փառավորապես շարունակվել է մինչև 1921 թ., երբ Վրաստանում վերջ է տրվել Թիֆլիսի հայոց պատմությանն ու տեղի հայկական ավանդական տպագրությանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Էնֆիաճեանց» տպարանի պատմության մասին որևէ աղբյուրում մանրամասն չի հիշատակվել: Թիֆլիսի հայկական գրատպության խնդիրներին անդրադարձ կատարած հեղինակները մի քանի նախադասությամբ են ներկայացրել նաև Համբարձում Էնֆիաճեանցի տպարանը: Սակայն որևէ մեկը չի անդրադարձել այդ տպարանի ստեղծման հանգամանքների, հնարավոր սեփականատերերի անձերի ճշգրտման, կատարած գործի մեծության, չափին, հրատարակությունների բովանդակային կարևորությանը: Թիֆլիսի հայ գրատպության հանգամանքների պատմաքննական, պատմահամեմատական, պատմավերլուծական մեթոդների համակցմամբ սույն հոդվածով ներկայացնվում են XIX դարի 56-70 թթ. «Էնֆիաճեանց» տպագրատան գործունեության փուլերը, այդ հաստատության կրթալուսավորչական կարևորագույն իրողությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1856թ. Թիֆլիսում հիմնադրվել է հերթական վեցերորդ հայկական տպարանը, որին ընդհանրական «Էնֆիաճեանց» անունն է տրվել: Թեև այն թվով վեցերորդն էր, բայց այդ ժամանակ նախորդ հինգից միայն մեկը՝ Ներսիսեան հոգևոր դպրոցի տպարանն էր գործում:

«Էնֆիաճեանց» տպարանը հիմնադրել են եղբայրներ Ավետիք (ծնվել է 1816 թ., մահվան թվականն անհայտ է) և Համբարձում (1824-1896) Էնֆիաճեանց եղբայրները (Հայր Գարեգին Զարբհանալյան, 1898): Նրանք ծնվել են Արևմտահայաստանի պատմական Կարին քաղաքում: 1830 թվականին ընտանիքով փոխադրվել են Թիֆլիս: Ընդունվել և ավարտել են Ներսիսյան հոգևոր դպրոցը:

1846 թ. եղբայրները Թիֆլիսի կենտրոնում՝ Երևանյան հրապարակում գտնվող Թամամշանների իջևանատան վերնահարկում, հիմնել են գրավաճառանոց, որն այդ ժամանակ Թիֆլիսի հայկական և վրացական միջավայրում եղել է միակը, որտեղ վաճառվել են գրքեր ու պարբերականներ, կատարվել են աշխարհի տարբեր երկրներում հրատարակվող պարբերականների բաժանորդագրություններ: Ավագ եղբայրը՝ Ավետիքը, մի քանի անգամ մեկնել է Կ.Պոլիս՝ գրավաճառ հորեղբոր մոտ, որտեղից Թիֆլիս է բերել աշխարհի տարբեր քաղաքներում հրատարակված հայերեն նոր գրքեր:

1850 թ. եղբայրները կազմել և տպագրել են իրենց գրավաճառանոցի գրքերի ցուցակը՝ «Յուակ ամենայն ազգ հայերեն մատենից, տպագրելոց ի Վենետիկ, ի Վեննա, ի Կոստանդնուպոլիս, ի Կալկաթա, ի Ջմիռնա, ի Մոսկով և յայլ քաղաքս: Վաճառին ի գրատան եղբարցք Աւետիքայ Համբարձումայ Էնֆիաճեանց ի Տփլիս, ի պանդոկի Գ.Թամամշեանց թիվ 18, ի վերին յարկս» վերնագրով: Սա Կովկասում տպագրված առաջին գրացուցակն է:

Եղբայրները ոչ միայն տպագիր գրականության, պարբերականների վաճառք էին իրականացնում, այլ նաև գնում և վաճառում էին ձեռագիր մատյաններ: Ձեռագրերի մի այդպիսի ցուցակ Համբարձում Էնֆիաճեանցը 1847 թվականին հրատարակել է Հնդկաստանի Կալկաթա քաղաքում հրատարակված «Ազգասեր» թերթում «Յուցակ ձեռագիր մատենից եղելոց ի գրատան գրավաճառ երկուց եղբարց Աւետիկայ և Համբարձումայ Էնֆիէճեանց Կարնէցոյ» վերնագրով (*Ազգասեր, քաղաքական, բարոյական եւ բանասիրական գիտելեաց*, 1847): Յուցակում ընդգրկված են 45 ձեռագրեր:

Եղբայրներից Համբարձումը թղթակցել է «Հայաստան», «Արշալույս Արարատեան», «Բանասեր» պարբերականներին:

Գրավաճառ եղբայրները, գործ ունենալով գրքի, պարբերականների, ձեռագրերի, գրապիտույքների վաճառքի հետ, զգացել են այդ գործի շահավետությունը, ինչը նրանց հուշել է զուգահեռ հրատարակչական գործ սկսելու գաղափարը:

Մինչև նրանց կողմից տպարան ստեղծելը, Թիֆլիսում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին 1819 թվականին հիմնել էր տարածաշրջանի առաջին մասնավոր

տպարանը, որն անխափան գործել էր մինչև 1830 թվականը, որից հետո մեկ տասնամյակով փակվել, ապա վերաբացվել էր 1841 թ.: 1838-1856 թթ. հայկական տպարաններ էին հիմնել Հակոբ և Դավիթ Արզանեանց եղբայրները (գործել է 1838-1843թթ., տպագրել տասներեք գիրք), Մարգար Ղուլեանցն ու Մկրտիչ Շահմուրադեանցը (գործել է 1849-1850 թթ., տպագրել երկու գիրք), Գաբրիել քահանա Պատկանեանցը (գործել է 1850-1851 թթ., տպագրել հինգ գիրք, մեկ լրագիր, մեկ օրացույց), Յակովբ Գրիգորեան Արզումանեանցը (գործել է 1855-1856 թթ., տպագրել ութ գիրք, մեկ օրացույց):

1856 թ. գործում էր միայն Ներսիսեան հոգևոր դպրոցի տպարանը: Նույն թվականին եղբայրները գրավաճառանոցի շենքի առաջին հարկում բացել են տպարան, որի գործունեության այդ փուլի մասին որևէ հավաստի տեղեկություն չենք կարողացել քաղել ժամանակի արխիվներից, ինչպես նաև որևէ տպագիր նյութ չի պահպանվել:

Շուտով եղբայրները բաժանել են իրենց բիզնեսը, գրավաճառանոցն անցել է Ավետիքին, տպարանը՝ Համբարձումին: Վերջինս 1857 թվականին տպագրել է Յակովբ Կարենեանցի մեկ գիրք (Կարենեանց Յակովբ, 1857), որը, սակայն, չի հասել մեր օրերը:

Տպարանի աշխատանքն արդյունավետ դարձնելու նպատակով 1859 թվականին Համբարձում Էնֆիաճեանցը համագործակցել է Գաբրիել Մելքումեանցի հետ: Արդյունքում տպարանը հրատարակել է մոտ երեք տասնյակ գիրք: Սակայն Գաբրիել Մելքումեանցը 1863 թ. դադարեցրել է համագործակցությունը, որից հետո տպարանը աշխատացրել է միայն Համբարձում Էնֆիաճեանցը՝ որպես տպարանատեր և հրատարակիչ (Լէօ, 1912): Այնուամենայնիվ, միայնակ, սեփական միջոցներով, Համբարձումը դժվարացել է տպարանի ֆինանսական խնդիրները լուծել և փնտրել ու գտել է գործընկերներ: 1866 թ. նրա հրատարակությունների վրա ավելացել է «Ի տպարանի Համբարձում Էնֆիաճեանցի եւ ընկ.» (*Ուելորութիւն առաջնորդի Հայոց Արրպատրանց Գէորգայ արքեպիսկոպոսի Վեհապետեան ի Թէհրան*, 1866) տիտղոսը: Որևէ հետազոտող փորձ չի արել պարզելու, թե «ընկ.» տիտղոսի տակ ովքեր են համագործակցել Համբարձում Էնֆիաճեանցի հետ, չի ճշգրտվել նրանց ինքնությունը:

Թիֆլիսում քաղաքագլուխ Գալուստ Շերմազան[եանց]-Վարդանեանցի ստեղծած մատենադարան-գրադարանի մասին նյութեր փնտրելիս բացահայտվել է **«ընկ.»** տիտղոսի առեղծվածը:

1860-ական թթ. սկզբին տպարանատեր և հրատարակիչ Համբարձում Էնֆիաճեանցը նաև հասարակական ակտիվ գործունեություն է ծավալել, իր քաղաքական հայացքներով հարել է այն խմբի անհատներին, որոնք պայքար էին մղում դրսեկ թիֆլիսեցիների դեմ: Այս ծիրում էլ համագործակցել է այդ թևի ներկայացուցիչներ «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս Սիմեոնեանցի, Գաբրիել Սունդուկեանցի, Դավիթ Ռոտինեանցի հետ: Գաղափարական համագործակցությունը վերաճել է նաև աշխատանքային համագործակցության: Վերջին երկուսը՝ Գաբրիել Սունդուկեանցն ու Դավիթ Ռոտինեանցը, առանց իրենց անունը թմբկահարելու, ներգրավվել են տպարանի կառավարման գործում և փաստացի դարձել **«ընկ.»** տիտղոսի տակ թաքնված համագործակցողներ: 1865 թ. ամռանը Թիֆլիսում ծագած համքարությունների խռովության փաստն ուսումնասիրող իշխանական հանձնաժողովի գրառումներից պարզվել է, որ խռովությունը հրահրելու գործում գաղափարական դերակատարություն են ունեցել նաև տպարանատեր-հրատարակիչ, Թիֆլիս քաղաքի հասարակական վարչության անդամ Համբարձում Էնֆիաճեանցը և վերը թվարկված անհատները: Արձանագրվել է, որ Համբարձում Էնֆիաճեանցը տպարան պահելու ընկերակցության մեջ է Թիֆլիսի քաղաքագլուխ Գալուստ Շերմազան[եանց]-Վարդանեանցից դժգոհ նահանգական ատյանի խորհրդական, Ռուսաստանի արքունի խորհրդական (գեներալ-լեյտենանտ, 1889 թ.) (Տիգրան Հայազն, Ղազարյան Գ., 2009) Գաբրիել Սունդուկեանցի և նրա քենակալ, բժիշկ Դավիթ Ռոտինեանցի հետ: Քննիչները պարզել են, որ «Մեղու Հայաստանի» թերթը տպագրվում է **Համբարձում Էնֆիաճեանցին, Գաբրիել Սունդուկեանցին, բժիշկ Դավիթ Ռոտինեանցին պատկանող տպարանում:** Թիֆլիսի քաղաքագլուխների մասին աշխատություն գրելիս այս փաստին մասնակի անդրադարձել է պատմաբան Սամվել Կարապետյանը (Կարապետյան Ս., 2003): Ի դեպ, համքարների խռովության ճնշումից հետո Համբարձում Էնֆիաճեանցը ևս ձերբակալվել է, բայց շուտով ազատվել:

Պատմաբան Լեոի պնդումը, որ տպարանը պատկանել է միայն Համբարձում Էնֆիաճեանցին, իրական չէ:

1859-1870 թթ.¹ տասնմեկ տարում, «Էնֆիաճեանց» տպարանը իրականացրել է 62 հրատարակություն: Տպագրել է 52 բազմաբնույթ գիրք, 8 օրացույց, 6 թերթ և հանդես, հավանաբար հարյուրավոր պատվերային մանր տպագրություններ, որոնք, ցավոք, չեն պահպանվել:

«Էնֆիաճեանց» տպարանում տպագրվել են Գաբրիել Խատիսեանցի «Սէր» մանկական ընթերցանության գիրքը (1861), Միքայել Պատկանեանցի «Պարգեւ մանկա» (1862) գիրքը, Մատթեոս Ակաթողիկոսի «Հայելի աստուածային շնորհաց» աշխատությունը (1862), «Դիտողութիւն ճշմարտութեանց Ս.Աւետարանին Յիսուսի Քրիստոսի» (1863), «Խորհրդածութիւն շնորհաց եւ նշանաց խորհրդոյ Քրիստոնէական Սուրբ եկեղեցւոյ ի պէտս ուղղափառ մանկանց նորի» (1863) գրքերը, Խաչատուր Աբովեանի «Նախաշավիղ» դասագիրքը (1862), «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն (1864), Գաբրիել Սունդուկեանցի «Գիշերվա սաբրը խեր է» (1866), Կարապետ վարդապետ Շահնազարեանցի «Ծրագիր պատմութիւն Հայաստան աշխարհին եւ տեսութիւն հին Հայաստանի եւ նորա այժմեան վիճակին վրայ» գիրքը (1863) և այլ գրքեր: Այս տպարանում է առաջին անգամ տպագրվել ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուաի պատմագիր Մովսես Խորենացուն նվիրված աշխատությունը (1863) (ԼանգլուաՎ., 1863):

1860 թ. հրատարակիչ-տպարանատեր Համբարձում Էնֆիաճեանցը և խմբագիր Մարկոս Աղաբեգեանը հիմնել են «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (1860–1863), որի տիտղոսաթերթին նշված է, որ տպագրվել է «Ի հայտ պարանի Գաբրիելի Մելքումեանց և Համբարձումայ Էնֆիաճեանց» տպարանում: 1862 թ. «Էնֆիաճեանց» տպարանը Ներսիսյան դպրոցի տպարանից կարողացել է իր հարկի տակ տեղափոխել «Մեղու Հայաստանի» թերթի հրատարակությունը: Այստեղ են տպագրվել նաև «Գարուն» ամսագիրը (1864–1871), «Վաճառական» թերթը (1866–1867):

1863 թ. սկսած Ներսիսյան դպրոցի հեղինակների կազմած դասագրքերն ու գրքերը ևս տպագրել են այս տպարանում: Ստեփաննոս Պալասանեանի 1865 թ. հրատարակված «Պատմութիւն Հայոց գրականութեան» գրքի, Ներսիսեան հոգևոր

դպրոցի կանոնադրության (1866), Ճառախօսութիւն եւ համարատուութիւն Ներսիսեան Ազգային հոգեւոր դպրոցի (1870) գրքերի տիտղոսաթերթերին . «Տպագրութիւն Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցիի տպարանի Համբարձում Էնֆիաճեանց և Ընկ.» մակագրությունը: Ավագ քահանա Հովսեփ Օրբելու «Նախաշաւիղ կրօնագիտութեան ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ» գրքի Ա և Բ հատորները մատենագիտական աղբյուրներում ներկայացված են որպես Ներսիսեան հոգևոր դպրոցի տպարանում 1870 թ. հրատարակված և դրված, սակայն մենք բացառում ենք այդ թվականին որևէ գրքի տպագրություն Ներսիսեան ազգային ուսումնարանի տպարանում: Մեր ձեռքի տակ չկան այդ գրքերը, որպեսզի տիտղոսաթերթերից ճշտենք դրանք տպագրած տպարանի անունը, բայց համոզված ենք, որ տպագրվել են «Էնֆիաճեանց» տպարանում:

Իրականում 1861 թ. Ներսիսեան հոգևոր դպրոցի տպարանը իրականացրել է երկու գրքի տպագրություն և նորոգման, տպագրական հնարավորությունները թարմացնելու-նորացնելու նպատակով աշխատանքները դադարեցրել: Գրեթե երկու տարի տպարանը եղել է նորոգման գործընթացում: Աշխատանքներն ավարտվել են 1863 թ. սկզբին: Հոգևոր ուսումնարանի հոգեբարձու Յ[ակոբ] Մարկոսեանցը 1863 թվականի հուլիսի 20-ին նամակով դիմել է «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պ[ետրոս] Սիմեօնեանցին, որ թերթում տպագրի հետևյալ հայտարարությունը. «Թիֆլիսի Հայոց հոգևոր դպրոցի Հոգաբարձութիւնը ծանուցում է հայ հասարակութեանը, որ նորումս բարեկարգել է իր տպարանը նորաձոյլ տառերով և արդեն սկսած է տպագրութիւնը: Եթէ ցանկացողներ կան որէիցէ տպագրութիւն անելու, կարող են դիմել նոյն տպարանը և տեղեկանալ թէ տպագրութեան յարմարութեանը և թէ տպելու պայմաններին» (Մեղու Հայաստանի, 1863): Թեև տպարանը նորոգվել-հագեցվել է նոր մեքենակազմով, տառատեսակներով, անգամ հրատարակել է երկու գիրք, սակայն անհայտ պատճառներով տպարանի դռները փակվել են և մնացել են գոց մինչև 1869 թվականի վերջերը (*Հայկական աշխարհ*, 1870):

Մասնագիտական գրականության մեջ մի քանի բառով արձանագրվել է, որ 1870-ական թթ. սկզբին Համբարձում Էնֆիաճյանցը գնել է Ներսիսյան հոգևոր

ուսումնարանի տպարանը: Որևէ մեկը չի ուսումնասիրել վաճառքի հանգամանքները և խնդիրը մնացել է հայտարարության մակարդակում: Առաջին անգամ ներկայացնում ենք մանրամասները:

Ներսիսեան հոգևոր ուսումնարանի հոգաբարձուները հավանաբար 1869 թ. վերջերին արձանագրել են, որ տպարանում առկա է չորս խանգարված մամուլ, 30 փուխ նոր գործածելի տառեր, 60 փուխ անգործածելի տառեր, ինչպես նաև առկա են տպագրական այլ պարագաներ, բայց դրանցով տպագրական գործ կազմակերպել այլևս անհնար է: Տպարանն աշխատեցնելու համար նրանք հունվարի սկզբին՝ յոթ տարվա անգործությունից հետո, անցկացրել են տպարանը կապալով այլ մարդկանց հանձնելու քննարկում:

Առաջինը հրավիրվել է «Հայկական աշխարհ» ամսագրի խմբագիր Ստեփաննոս (Խորեն) Ստեփանէն (Երիցեանց Ա., 1890; Մխիթարյան Մ., 2002): Վերջինս Ներսիսեան հոգևոր դպրոցի տպարանի փակ եղած ժամանակ՝ 1865 թ. հուլիսի 28-ին, գրությամբ դիմել էր Ներսիսյան դպրոցի հոգաբարձությանը՝ անգործ տպարանը գործարկելու և այդտեղ իր խմբագրած «Հայկական աշխարհի կոունկ» օրագիրը տպագրելու առաջարկով, բայց արդյունքի չէր հասել (Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, 2019): Հոգաբարձությունը որոշակի պայմաններով Ստեփաննոս Ստեփանէին առաջարկել է տպարանը կապալով աշխատեցնել: Վերջինս իր պայմաններն է թելադրել, որ տպարանը կվերցնի վեց տարվա կապալով, այն կշարունակի կրել Ներսիսեան ուսումնարանի տպարան անունը, բայց կլինի առանձին կառույց (այն պետք է մնա դպրոցի երկու սենյակներում): Տարածքի համար վճարվելու էր 120 ռուբլի վարձ: Պայմանագրի երաշխավոր հանդիսանում էր հոգաբարձու Ալադաթեանը: Առաջին օրը որևէ որոշում չի կայացվել: Հաջորդ օրը ներկայացել է նաև տպարանատեր Համբարձում Էնֆիաճեանցը: Նրա պայմաններն այսպիսին էին. տպարանը կշարունակի կրել ուսումնարանի անունը, բայց պետք է տեղափոխվի նրա սեփական տպարանը և տեղակայվի առանձին սենյակում, տպարանի կապալի համար տարեկան ուսումնարանին կտրվի 100 ռուբլի կապալավճար: Պայմանագրի երաշխավոր պետք է լիներ բժիշկ Ռոտինեանցը:

Երկու կողմերի պայմանները քննարկելուց հետո հոգաբարձուները միաձայն որոշել են տպարանը վեց տարվա կապալով հանձնել Համբարձում Էնֆիաճեանցին

(*Հայկական աշխարհ*, 1870): Ըստ էության, նախապես պայմանավորվածություն է ձեռք բերվելվեց տարվա կապալի մասին: Հավանաբար այդպես էլ վճովել է, բայց ավելի ուշ իրականացվել է առք ու վաճառք:

Ստեփաննոս Ստեփանէն Համբարձում Էնֆիաճեանցի կապալին մասնակցելու որոշումը բացատրել է նրանով, որ վերջինս իր «Էնֆիաճեանց» տպարանի համար պատվիրել էր և շուտով ստանալու էր արագագործ տպագրական մամուլներ և իրեն ձեռնտու չէր, որ մեկ այլ անձ դառնար տպարանատեր-մրցակից: Մենք կարծում ենք, որ հենց այդպիսի դրդումով էլ գործել է տպարանատեր Համբարձում Էնֆիաճեանցը, և դրանում պախարակելի որևէ բան չկա: Այդ գործարքով Համբարձում Էնֆիաճեանցի տպարանը 1870-ական թթ. իր ձեռքն է առել Թիֆլիսի հայերեն գրատպության մենաշնորհը: Այդ գործարքից միայն երկու տարի հետո՝ 1872 թ., Թիֆլիսում բացվել է լիարժեք աշխատող հայկական նոր տպարան:

Համբարձում Էնֆիաճեանցի այս գործարքով ավարտին է հասցվել դեռևս 1664 թ. Ամստերդամում հիմնադրված, 1817 թ. գնված, Թիֆլիս տեղափոխված և 1819-1870 թթ. Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի (ուսումնարանի) հարկի տակ գործած տպարանի գործունեության նախավերջին փուլը: Վերջինը «Էնֆիաճեանց», ապա՝ Ռոտինեանց տպարաններում եղած անորոշ ժամանակահատվածն է:

Համբարձում Էնֆիաճեանցի տպարանը, գործածության մեջ է դրել Փարիզի նորաձև հայերեն տառերից շատերը, իսկ Վիեննայի տառերի մի տեսակը, որը օգտագործվել է գրքերի տպագրության համար, Համբարձում Էնֆիաճեանցի պատվերով բարեփոխվել է, դրանց հին գլխագրերը հարմարեցրել են փարիզյան գլխագրերին: Արդյունքում առաջացել է ինքնուրույն տառատիպ, որը կարելի է անվանել Թիֆլիսիտիպ:

«Էնֆիաճեանց» տպարանի հրատարակություններն աչքի են ընկել մաքուր տպագրությամբ, ճաշակով: Տպարանի տիրապետող դիրքը հիմնական սեփականատերը պահել է իր ձեռքում համարյա մինչև 1881 թ.: Թեև Թիֆլիսում 1872 թ. հետո նոր, մրցակից տպարաններ էին բացվել, բայց Էնֆիաճեանցի տպարանի ուժը ձուլարանն էր, որը դեռևս միակն էր Թիֆլիսում և ինչպես իր, այնպես էլ Թիֆլիսի մյուս հայկական և ոչ հայկական տպարանների համար տառեր էր ձուլում-մատակարարում:

Համբարձում Էնֆիաճեանցն իր գործունեության արդյունքում բավականին հայտնի անձ էր ոչ միայն Կովկասում, այլ նաև դրա սահմաններից դուրս: Միքայել Նալբանդյանն իր հրատարակելիք Հայաստանի աշխարհագրության քարտեզը տարածելու համար նրան Թիֆլիսում նշանակել էր գործակալ:

Համբարձում Էնֆիաճեանցի տպարանի համբավը Կովկասի սահմաններից դուրս նույնպես հայտնի էր: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ 1869 թ. սեպտեմբերի 6-ին Սանկտ Պետերբուրգից հայտնի մտավորական-մատենագետ Միքայել Միանսարեանցը Սուրբ Ղազարի միաբան Հայր Ղևոնդ վարդապետ Ալիշանին գրած նամակում նշել է. «Թիֆլիս հրատարակուել է ա եւ բ մասն գործնական քերականութեանը Բալասանեանի, նոր ձեով, նմանացնելով գերմանացոց արդի քերականութեանց, նմացրած ռուս քերականութեանց» (Օհանեան Հայր Վահան վարդապետ, 2020): Խոսքը 1868 և 1869 թթ. Թիֆլիսում՝ «Էնֆիաճեանց» տպարանում, Ստեփանոս Յովհ. Պալասանեանի հրատարակած «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» գրքի Ա և Բ հատորների մասին է:

Համբարձում Էնֆիաճեանցի անձի մասին ժամանակակիցները միանշանակ կարծիք չեն ունեցել: Հայր Ղևոնդ վարդապետ Ալիշանին 1865 թ. դեկտեմբերի 18-ին գրված նամակում Մխիթարյան միաբանության կրոնավոր Հայր Զաքարիա Գուրգենեանը բողոքել է, որ «Խաբեբայ անպիտան Էնֆիաճեանն...» (Օհանեան Հայր Վահան վարդապետ, 2020) չարաշահել է իր վստահությունը և չի տրամադրել որոշ ձեռագրեր իր աշխատանքն ամբողջացնելու համար: Թե խոսքն ինչ ձեռագրերի մասին է, ցավոք, հայտնի չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էնֆիաճեանց» տպարանի գործունեությունը Թիֆլիսի հայ գրահրատարակչական գործի պսակն է: Այս տպարանն անընդհատ բարեփոխվել է միևնույն ժամանակ բարելավել է ավանդական տպագրական մոտեցումը, նոր տառատեսակներ է օգտագործել տպագրության մեջ, բարելավել է եվրոպական մի տառատեսակ և ստեղծել թիֆլիսյան-տեղական տառատեսակ: Տպարանատերը ստեղծել է տպարանի սեփական տառածուլարանը և մինչև 1881 թ. պահպանել բացարձակ մենաշնորհ: Բարելավել է օգտագործվող թղթի, տպագրական մրի որակը: Համբարձում Էնֆիաճեանցի ընդդիմախոսներից մեկը՝ խմբագիր

Ստեփաննոս Ստեփանէն, 1867 թ. դրվատական խոսքեր է գրել. «Տպարանատէր պ. Էնֆիաճեանցը սկսել է լավացնել իւր տպարանը տառերի կողմից: Նոր ձուլած տառերը, մանավանդ 10 Հ^ր բավական գեղեցիկ են: Այժմ կարելի է լինում տպարանում տպվող լրագիրը կամ գիրքը առանց դժվարութեան կարդալ» (*Հայկական աշխարհ*, 1867): Այս տողերից հետո, այնուամենայնիվ, խմբագիր Ստեփանէն դժգոհել է տպարանատիրոջից՝ տպագրության բարձր գների համար:

«Էնֆիաճեանց» տպարանում տպագրված գրքերը զետեղվել են Վենետիկի Մխիթարյանների միաբանության, Մոսկվայի Լազարյան ինստիտուտի, Շուշիի Հայոց մարդասիրական ընկերության, Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի և այլ գրադարաններում: «Էնֆիաճեանց» տպարանից դուրս եկած հրատարակությունները (գրքեր, պարբերականներ, օրացույցներ, մանր տպագրություններ) այսօր էլ առկա են Հայաստանի գրադարանային համակարգում՝ Հայաստանի ազգային գրադարան, ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարան, Մատենադարան, Երևանի պետական համալսարանի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարաններ:

Մեր ուսումնասիրությունը միայն ընդգրկում է «Էնֆիաճեանց» տպարանի մինչև 1870 թ. ընկած ժամանակահատվածը: Սակայն դրանից հետո՝ մինչև 1881 թ., երբ այն դեռևս «Էնֆիաճեանց» անունն է կրել, ապա մինչև 1921 թ., երբ այն աշխատեցրել են Ռոտինեանցները, տպարանում հրատարակվել է 500-ից ավելի գիրք և մեկ տասնյակ պարբերական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ազգասեր, քաղաքական, բարոյական եւ բանասիրական գիտելեաց լրագիր (1847).

Արարատեան ընկերութեան, Կալկաթա, № 122, 396-399.

Երիցեանց Ա. (1890). *Գրիգոր Արծրունունու եւ նրա հինգ տարւայ գրական գործունեութեան առիթով (1865-1890)*. Արօր.

Լանգլօա Վ. (1863). *Մովսէս Խորենացի եւ նրա պատմութիւնը*. տպարան Հ. Էնֆիաճեանցի, Թիֆլիս.

Լէօ (1912). *Հայ գրքի տօնը*. օրիորդ Ն. Աղանեանի էլեկտրոտպարան, Թիֆլիս.

- Կարապետյան Ա.** (2003). *Թիֆլիսի քաղաքագլուխները*. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան.
- Կարենեանց Յակովբ** (1857). *Վերադարձ երից վարդապետաց Սարգսի Թեոդորեան, Գաբրիելի Այվազեան և Ամբրոսեայ Գալֆայեան ի ծոց լուսաւորչական Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ*. Տպարան+Համբարձում Էնֆիաճեանցի, Թիֆլիս.
- Հայկական աշխարհ** (1867). Ամսագիր 1, 70.
- Հայկական աշխարհ** (1870). Ամսագիր 2, 61-62.
- Հայր Գարեգին Զարբհանալեան** (1898). *Պատմութիւն հայկական տպագրութեան, սկզբնաւորութենէն մինչ առ մեզ*. տպարան Ս.Ղազարի, Վենետիկ.
- Մխիթարյան Մ.** (2002). Խորեն Ստեփանեի. Հայկական Աշխարհ.
- Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Vol. գիրք Ի.** (2019). Մայր Աթոռի հրատ.
- Տիգրան Հայազն, Ղազարյան Գ.** (2009). *1000 հայազգի գեներալներ, ծովակալներ*. Երևան, հեղինակային հրատ.
- Ուղեւորութիւն առաջնորդի Հայոց Արրպատանց Գէորգայ արքեպիսկոպոսի Վեհապետեան ի Թէիրան.** (1866). ի տպարանի Համբարձումայ Էնֆիաճեանց եւ ընկերութեան, Տիֆլիս.
- Օհանեան Հայր Վահան Վարդապետ** (2020). *Հայր Ղեւոնդ վրդ. Ալիշանին ուղղուած նամակներ: Vol. Ա. Մաս* (1st–2nd ed.). Վենետիկ-Ս. Ղազար, ՃՀԸ տարի.

REFERENCE LIST

- Azgaser**, politicheskij, moral'nyj i filologicheskij zhurnalist (*Azgaser, political, moral and philological journalist*). (1847). Araratskoe obshchestvo, Kal'kutta, № 122, 396-399.
- Ericyan A.** (1890 g.). Po sluchayu Grigora Arcrunu i pyati let ego literaturnoj deyatel'nosti (*On the occasion of Grigor Artsruni and five years of his literary activity*). (1865-1890). Aror.

- Langlua V.** (1863 g.). Movses Horenaci i ego istoriya(*Movses Khorenasy and his history*). Tipografiya H. Enfiayanci, Tiflis.
- Leo** (1912). Den' armyanskoj knigi(*Armenian Book Day*). Miss N. Elektronnaya tipografiya Aganyana, Tiflis.
- Karapetyan S.** (2003). Mery Tiflisa(*Mayors of Tiflis*). Izdatel'stvo "Nauka" NAN RA, Erevan.
- Yakov Karenskij** (1857 g.). Prepodobnye Sarkis Teodoryan, Gabrieli Ajvazyan i Amvrosij Galfayan vernulis' v Svyatuyu Cerkov' zaliva Prosveshcheniya Armenii(*Rev. Sarkis Teodoryan, Gabrieli Ayvazyan and Ambrose Galfayan returned to the Holy Church of the Gulf of Enlightenment of Armenia*). Tparan+ Ambarcum Enfiadzianci, Tiflis.
- Armyanskij mir** (1867 g.). (*Armenian world*).ZHurnal, 1, 70.
- Armyanskij mir** (1870 g.). (*Armenian world*).ZHurnal, 2, 61-62.
- Otec Garegin Zarbhanalyan** (1898). Istoriya armyanskogo knigopechataniya ot nachala do nashih dnei(*The history of Armenian printing from the beginning to the present day*). Tipografiya S. Gazara, Veneciya.
- Mhitaryan M.** (2002). Horen Stepanej(*Horen Stepanej*). Armyanskij mir.
- Svidetel'stva istorii Armyanskoj cerkvi**(*Evidence of the History of the Armenian Church*). Tom. kniga I. (2019). Izdanie Pervoprestol'nogo.
- Tigran Ayazn, Kazaryan G.** (2009). 1000 armyanskih generalov, admiralov(*1000 Armenian generals, admirals*). Erevan, avtorskoe izdanie.
- Poezdka Armyanskogo Patriarha Atrpatantov arhiepiskopa Georgiya Vekhapedyana v Tegeran.** (1866).(*Trip of the Armenian Patriarch of the Patriarchs Archbishop George Vekhapedian to Tehran*). tipografii Ambardzumaj Enfiadzhyans i kompaniya Tpyhis.
- Oganyan Ajr Vaan Vardapet** (2020). Prepodobnyj otec Gevond Pis'ma, adresovannye Alishanu(*Reverend Father Ghevond Letters addressed to Aliskhan*). Tom. A. CHast' (1–2-e izd.). Veneciya-S.Lazar, CRC god.

РЕЗЮМЕ

РОЛЬ ПЕЧАТИ "ЭНФИАЧЯНЦ" В 1856-1870 ГГ.
В РАЗРАБОТКАХ АРМЯНСКИХ КНИГОПЕЧАТНИЯ ТИФЛИСА
СИРЕКАНЯН ТИРУИ

В 1512 году в городе Венеция были напечатаны первые армянские книги. В последующие века в других странах Европы и Азии открывались армянские типографии, печатались армянские книги и периодические издания. Но только в первой четверти XIX века книгопечатание войдет на Кавказ, в город Тифлис. Армянская типография, основанная в Тифлисе в 1819 году архиепископом Нерсесом Аштаракеци, предводителем Армянской епархии Вирка, была не только первой в армянской, но и в грузинской действительности. Там с изданием первой армянской книги в 1823 году начался цивилизованный процесс распространения просвещения среди кавказских армян.

В статье впервые раскрываются эпизоды деятельности одного из важнейших центров армянского книгопечатания в Тифлисе типографии «Энфиачянци» в 1856-1870 годах. На первом этапе ее открыли братья Аветик и Амбарцум Энфиачянци в 1856 году, затем типография перешла к Амбарцуму Энфиачяцу (1857-1859), на втором этапе Амбарцум Энфиачяц сотрудничал с Габриэлем Мелкумянцом (1859-1863). Новый этап начался в 1863 году, Амбарцум снова управлял типографией в одиночку. Габриэль Сундукянц и Давид Ротинянц (1864-1870) сотрудничали с ним от 1864 до 1870. Вероятно, из-за финансовых затруднений в 1881 году типография перешла к Маркианосу Ротинянцу, сыну одного из компаньонов, Давида Ротинянца.

Ключевые слова: «Энфиачянци» типография, Аветик и Амбарцум Энфиачянци, Габриэль Сундукянц, врач Давид Ротинянц, издатель Маркианос Ротинянц, армянская типография, Тифлис.

ABSTRACT
THE ROLE OF "ENFIAJYANTS" PUBLISHING HOUSE IN 1856-1870
IN THE DEVELOPMENT OF THE ARMENIAN TYPOGRAPHY OF TIFLIS
SIREKANYAN TIRUHI

In 1512, the first Armenian books were printed in Venice, Italy. In the following centuries, Armenian publishing houses were opened in other countries of Europe and Asia, thus Armenian books, periodicals were printed. But only in the early 19th century, printing entered the Caucasus, the Georgian-Armenian reality. In 1819, the Armenian publishing house was founded in Tiflis by Archbishop Nerses Ashtaraketsu, leader of the Armenian Diocese of Virk. It was not only the first in Armenian, but also in Georgian reality. There, the first Armenian book was printed in 1823.

The article reveals one of the most important centers of Armenian printing in Tiflis, the "Enfiajyants" publishing house in the years 1856-1870. In the first stage it was opened by the brothers Avetik and Hambardzum Enfiajyants in 1856, then it passed to Hambardzum Enfiajyants (1857-1859), in the second stage Hambardzum Enfiajyants cooperated with Gabriel Melkoumeants (1859-1863). A new phase began in 1863, Hambardzum again managed the publishing house alone. Gabriel Sundukeants and Davit Rostineants (1864-1870) collaborated with him in 1864-1870. Probably due to financial complications, in 1881, the publishing house passed to Markianos Rotineantsi, one of the associates' son, Davit Rotineantsi.

Key words: "Enfiajyants" printing house, Avetik and Hambardzum Enfiajyants, Gabriel Sundukeants, doctor Davit Rotineants, publisher Markianos Rotineants, Armenian printing, Tiflis.

Հոդվածը ստացվել է՝ 21.04.2023

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 25.04.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 14.07.2023